Արփի

Բնակչության թիվը՝ 1283

Վայոց ձորի մարզի Արփիի համայնքը /գ. Արփի/ գտնվում է պատմական Հայաստանի Սյունյաց աշխարհի Վայոց ձոր գավառում: Գյուղը հիմնադրվել է 1965 թվականին Եղեգնաձորի շրջանի Գնիշիկ գյուղի տարհանված բնակչության բազայի հիման վրա: Արփի գյուղը գտնվում է Արփա գետի հովտում, Եղեգնաձոր մարզկենտրոնից 8 կմ արևմուտք: Գյուղի միջով է անցնում Երևան-Մեղրի միջպետական ավտոմայրուղին: Արփիի համայնքը սահմանակից է հյուսիս-արևմուտքում՝ Աղավնաձոր, հյուսիս արևելքում՝ Գետափ, արևելքում՝ Եղեգնաձոր, հարավում՝ Արենի, Գնիշիկ համայնքներին: Ծովի մակարդակից գյուղի միջին բարձրությունը 1100 մ է: Գյուղի միջով հոսում է Արփա գետը: Գետը հարուստ է կողակ և բեղլու ձկնատեսակներով, իսկ ակունքում՝ կարմրախայտով: Գյուղը հարուստ է սիլիկատի հանքավայրերով: Կլիման խիստ չոր է և ցամաքային:

Արփի համայնքի վարչական սահմաններում գտնվում է Էրթիջ հին գյուղատեղին, որն, ըստ ավանդության, որպես բերդ է ծառայել տարածաշրջանի համար: 1930-ական թվականներին վերջին բնակիչները լքել են գյուղը խմելու և ոռոգման ջրի բացակայության պատճառով:

Հին գյուղատեղին հարակից <<Ջրով վանքի>> տարածքում բխող բնական աղբյուրի ջուրը, որը գյուղը խմելու ջրով ապահովելու միակ աղբյուրն է, հնուց ի վեր ուխտատեղի է: Ըստ ավանդության, այս աղբյուրի ջուրն ունի մաշկային հիվանդություններ բուժելու հատկություն:

Համայնքում կա 4 հուշարձան-կոթող, ի հիշատակ՝ Մեծ եղեռնի զոհերի, Հայրենական պատերազմում զոհված գնիշիկցիների, նույն պատերազմի հերոս Վահիկ Լևոնյանի և Արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների:

Արփիի համայնքն ունի 328 տնտեսություն, 1261 բնակիչ, որի 75 տոկոսն ապահովված է բնակարանով:

Գյուղն ապահովված է խմելու և ոռոգման ջրով:

Բարեկարգ են ներհամայնքային ճանապարհները: Գյուղն ունի միջնակարգ դպրոց եւ մանկապարտեզ: Դպրոցը հիմնանորոգված է և բարեկարգ:

Գործում է գյուղի գրադարանը, իսկ դպրոցի դահլիճում իրականացվում են մշակութային միրոցառումներ:

Համայնքում գործում է գինու 2 և քարի մշակման 1 արտադրամաս:

Համայնքի բնակչության հիմնական մասն զբաղված է գյուղատնտեսությամբ (հողագործություն և անասնապահություն), զարգացած է նաեւ մեղվաբուծությունը: